



Երևուաբաթ, 14 Հոկտեմբեր, 2024

## ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈԹ

(Միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, փուր ինձ իմասպութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

### ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԿԵԱՆՔԻ ԼՈՅՍ Է

Խօսքդ ճրագ է քայլերուս, լուսաւորող՝ ճամբաներուս:  
Երդում ըրի եւ խոսպացայ՝ արդար վճիռներդ գործադրել:  
Տառապանքս շաբ ծանր է, Տէր,  
կեանք փուր ինծի, քու խոսպումիդ համաձայն:  
Աղօթքներս կամաւոր ընծայի փեղ ընդունէ, Տէր,  
եւ օրէնքներդ սորվեցուր ինծի:  
Թէպէտ կեանքս յարագել վբանզի մէջ է,  
սակայն Օրէնքդ չեմ մոռնար բնաւ:  
Ամբարիշպները ինծի համար թակարդ լարեցին,  
սակայն ես չշեղեցայ հրահանգներէդ:  
Ինծի յաւիպենական ժառանգութիւն դարձուցի պապուիրաններդ,  
որովհեպել սրբիս ուրախութիւն են անոնք:  
Որոշած եմ կանոններդ կապարել.  
այդ է յաւիպենական վարձապրութիւնս:

### ՃԱՐԱԿԱՆ

Ծով կենցաղոյս Հանսապազ զիս ալէկոծէ:

Մըրրկեալ ալիք թրշնամին ինձ յարուցանէ:

Նաւապետ բարի լեր անձին իմոյ ապաւէն:

### ԱՊՈԹ

Տէր Ասպուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ մեզ երբ զաս քու թագաւորութեամբդ: Քեզի կը պաղապինք՝ քեզի խաչակից եղողին հետ, յաւիպեանս. ամէն:

### ՃԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾ

Առաջ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորման մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վբանզից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաքեցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Ասպուծոյ ծայնի աղաջանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Ասպուածածնին, եւ իշանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Ասպուծոյ: Ամենակալ Տէր Ասպուած մեր, կեցն՝ եւ ողորմեա:

## ԾԱՐՍԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամեսասուրք Երրարդութիւնն, առու աշխարհիս խաղաղութիւնն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւնն, ննջեցելոց պատվայութիւնն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

## ՍԱՂՍՈՍ 71

### ԾԵՐՈՒԹԵԱՆՍ ԱՏԵՆ ՄԻ ԼՔԵՐ ԶԻՍ

Ով Տէր, քեզի ապահնեցայ, թող ամօթով չմնամ քնաւ:  
Դուն՝ որ արդար ես՝ ազարէ զիս եւ պահէ,  
ականջդի ինձի խոնարհեցուր եւ փրկէ զիս:  
Ինձի պաշրպան, ապասպանարան եղիր եւ զիս փրկէ,  
որովհետեւ ապահնս եւ իմ ամրոց դուն ես:  
Ասպուած իմ, զիս ազարէ ամբարիշըներէն, անարդար եւ անգութ  
մարդոցմէ:  
Դուն ես յոյս, Տէր, իմ Տէրս, մաքրաշ տարիքէս յոյս քեզի կապած եմ:  
Իմ ծնելէս իսկ առաջ ես քեզի յանձնուեցայ,  
դեռ մօրս որովայնէն դուն եղար ապահնս. ընդմիշտ պիտի օրիներգեմ քեզ:  
Թէպէտ շաբեր նեղութիւններս քեզմէ մերժուած ըլլալու նշան համարեցին,  
բայց իմ հզօր օգնականս ես դուն:  
Բերանս անդադար քեզ կ'օրիներգէ, ամբողջ օրը քեզ կը փառաւորէ:  
Ծերութեանս ափեն զիս մէկդի մի նեղեր, զիս մի թողուր՝ երբ ոյժերս լրեն  
զիս:  
որովհետեւ թշնամիներս ինձի դէմ կը խօսին,  
զիս սպաննելու համար իրարու հետ կը խորհրդակցին:  
Իրարու կ'ըսեն.- «Վհա Ասպուած լքեր է զինք.  
Եկէք հալածենք եւ բռնենք զինք, որովհետեւ չկայ մէկը որ զինք ազարէ»:  
Ով Ասպուած, ինձմէ հեռու մի մնար,  
ով իմ Ասպուածս, փութա, ինձի օգնութեան հասիր:  
Թող զիս չարախօսողները ամչնան ու կորսուին,  
թող նախապինքով ծածկուին ու խայփառակ ըլլան ինձի չարիք  
կամեցողները:  
Բայց ես ընդմիշտ յոյս քեզի կապած եմ,  
ես պիտի շարունակեմ օրիներգել քեզ:  
Բերանս պիտի չդադրի պարմելէ արդար գործերդ եւ փրկութիւնդ,  
որոնք միդրովս չեմ կրնար չափել:  
Ես տաճարդ կը մփնեմ՝ հզօր գործերդ ներբողելու, Տէր, իմ Տէրս,  
հոչակելու արդարութիւնդ, միայն քու արդարութիւնդ:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի մատիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ԾԵՐՈՒԹԵԱՆՍ ԱՏԵՆ ՄԻ Լ.ՔԵՐ ԶԻՍ 71:1-16**

Հարազար, անմիջական, պրոբաց արդայայդութեամբ աղօթք-խնդրանք մըն է մեր այսօրուան Սաղմոսը որ պիտ փորձենք սերպել 71:1-16 համարները, ուր Դաւիթ անգամ մը եւս յայդարարութեամբ մը կըսէ. «Ով Տէր, թեզի ապահնեցայ, թող ամօթով չմնամ»: Նոյնանման աղօթք մը, որ գեսանք 31 Սաղմոսին մէջ: Այսպետ եւս, Դաւիթ իր յոյսը ամբողջութեամբ Ասքուծոյ վրայ դրած, ոչ թէ միայն մէկ պահուան մը համար, ոչ թէ միայն մէկ պարագայի մը կամ կացութեան մը առիթով, այլ՝ մօրը որովայնին մէջ եղած ժամանակէն սկսեալ: Այսինքն՝ կազմաւորուած պահէն սկսեալ մինչեւ խոր ծերութեան, ուր այս անգամ, կը խնդրէ, որ յանկարծ այդ ծերութեան ժամանակ Ասքուծ զինք չըլ: Հետաքրքրական արդայայդութիւն կայ նաև Ես 28:16 և Հռոմ 10:11 մէջ, ուր կըսուի. «Ասքուծոյ յուսացող սրբերը ամօթով չեն մնար»:

1-3 հմր Դաւիթ ամբողջութեամբ Ասքուծոյ ապաւնած է, ինչպիսին ալ ըլլան պարագաները: Ան նաև կը խոսքովանի թէ Ասքուծ արդար է, եւ ըստ այնմ այդ արդարութեան լոյսին գրակ ազաքում եւ պաշտպանութիւն կը խնդրէ Ասքուծմ: Հոմանիշ բառեր պաշտպան, ապաւնարան, ապաւն, ամրոց, որոնք սակայն ցոյց կու գրան, թէ Դաւիթ ամբողջութեամբ իր յոյսը Ասքուծոյ վրայ դրած:

4-6 հմր, հետաքրքրական է, որ Դաւիթ նախ կը ներկայացնէ թէ Ասքուծ ինչ բանէ ազաքէ զինք, ամրարիշտ, անարդար եւ անգութ մարդոցմ: Այսինքն՝ չար են, անարդար են եւ անգութ են, չեն ողորմիր: Այս հասքագումին դիմաց, կը շարունակէ ըսելով, թէ ինք Ասքուծոյ կապահնէ ոչ թէ որովհետք հիմա թշնամիներով շրջապատուած է, այլ՝ մօրը որովայնին մէջ կազմաւորուած պահէն սկսեալ Ասքուծ է իր յոյսը, իր Տէրը, Ասքուծոյ յանձնուած, եւ այդ բոլորին համար ընդմիշփ պիտի օրիներգէ:

7-8 հմր, Դաւիթ կանդրադառնայ, որ իր կրած նեղութիւնները իր թշնամիները այնպէս կարծեցին, թէ Ասքուծմ մերժուած է: Բայց ինք այդպէս չառներ, ընդհակառակը, այդ նեղութեան մէջ իսկ կու զայ խոսքովանելու ըսելով. «Իզօր օգնականս դուն ես»: Շարեր կը ծաղրեն ըսելով. «Ասքուծ լքեր է զինքը», «Անկարելի է որ Ասքուծ զինք փրկէ», «Տիրոց ապահնեցա, թող Տէրը փրկէ», այն նոյն արդայայդութիւնը, այն ինչ ըսին Քրիստոսի համար խաչելութեան պահուն: Խորքին մէջ, որքան Դաւիթ հետ կապ-ուած երեւոյթ մը, նոյնքան եւ մարզարեւութիւն կապուած Քրիստոսի, առաւել եւս մեզի այսօր, երբ մենք ալ նեղութեան ու դժուարութեան մէջ, մարդիկ կրնան այնպիսի եզրակացութեան հանգի եւ ծաղրել, ըսելով, «թէ ո՞ւր է, Ասքուծոյ վսրահեցա, թող Ասքուծ ազաքէ զինք»: Եւ ահա նշաններէն մէկը, որ Ասք-ուած օգնական է Դաւիթին, այդ ալ «Թերանս անդադար քեզ կ'օրիներգէ, ամրող օր կը փառաւորէ»: Ձէ չէ այդ կրած նեղութեան ու հալածանքին մէջ երբ ոյժերդ կը սպառին եւ ալ կարողութիւն չես ունենար խօսելու, բայց ընդհակառակը՝ Դաւիթ կ'օրինեգէ Տիրոց անունը:

9 հմր, որովհետք մօրը որովայնէն սկսեալ, մաքղաշ գարիքին Ասքուծոյ յանձնուած, Անոր ապաւինած էր, հիմա որ ալ ոյժերը սպառած են յառաջացած գարիքի պարճառով, կը խնդրէ որ Ասքուծ չըլ զինքը, որովհետք Ասքուծոյ ոյժը չապառիր:

10-11 հմր, որովհետք թշնամիները արիթը կնուզեն օգպագործել, կարծելով թէ Ասքուծ լքեր է զինք, ուրեմն Դաւիթ պաշտպանութիւն չունի կարծէք Ասքուծմ, աւելի դիւրին է զինք գրապակէ, սպան-նել, որովհետք չկայ մէկը որ զինք ազաքէ: Թշնամիները գիտեն, որ Դաւիթ պաշտպանութիւն մը ունի, մէկը կայ որ զինք կը պաշտպանէ: Հիմա որ գարիքը յառաջացած, ոյժերը սպառած, նեղութիւններու մէջ, կեզրակացնեն թէ Ասքուծ անոր կողքին չէ, ուստի առանձին է, եւ հետեւաբար կրնան հալածել, բռնել ու սպաննել զինք:

12-13 հմր, ահա այս վիճակին դիմաց, Դաւիթ կը խնդրէ Ասքուծմ, որ իրմէ հեռու չմնայ, եւ օգնութեան հասնի: Ընդհակառակը, թշնամիները, զինք չարախօսողները իրենք ամչնան ու կորսուին գիտենելով թէ Ասքուծ գալակաին Դաւիթի կողքին է եւ զինք կը պաշտպանէ:

14-16 հմր, անգամ մը եւս, ինչ ալ ըլլան պայմանները, Դաւիթ յոյսը Ասքուծոյ կապած է, եւ պիտի շարունակէ օրիներգել, եւ պիտի չդադրի պարմել Ասքուծոյ արդար գործերուն եւ փրկութեան մասին, որոնք կարելի չէ հաշուարկել եւ կամ մքրով ըմբռնել: Դաւիթ Ասքուծոյ ներկայութեան գալով Ասքուծոյ հզօր գործերը պիտի ներբռողէ, եւ Անոր արդարութիւնը հոչակէ եւ այդ բոլորին վկայութիւնը բայց: